ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հունվարի 2012թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման N 3 հավելվածում՝

ա. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության տուրիզմի զարգացման ծրագրերի բաժինը և մշակույթի վարչությունը միացման ձևով վերակազմակերպել մշակույթի և տուրիզմի վարչության ու այդ կապակցությամբ «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետի 21-րդ ենթակետի «Մշակույթի վարչություն» բառերը փոխարինել «Մշակույթի և տուրիզմի վարչություն» բառերով.

բ. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետի 22-րդ և 25-րդ ենթակետերը.

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «3. բաժիններ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ և 7-րդ ենթակետերով,

«6) Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին

7) Ներքին աուդիտի բաժին»:

2) Որոշման N 4 հավելվածում՝

ա. «Ղեկավարություն» գլուխը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ.

«	1	քաղաքապետ	1	450,0		450,0
	2	քաղաքապետի առաջին տեղակալ	1	380,0		380,0
	3	քաղաքապետի տեղակալ	3	350,0		1050,0
	4	Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ	1	350,0		350,0
	5	քաղաքապետի գլխավոր խորհրդական	1	290,0		290,0
	6	քաղաքապետի խորհրդական	7	280,0		1960,0

7	քաղաքապետի խորհրդական-գլխավոր դիզայներ	1	280,0		280,0
8	քաղաքապետի օգնական	4	230,0		920,0
9	մամուլի քարտուղար	1	230,0		230,0
10	գործավար	2	200,0		400,0
11	քաղաքապետի տեղակալի օգնական	4	190,0		760,0
12	Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի օգնական	1	180,0		180,0
13	քաղաքապետի առաջին տեղակալի գործավար	1	150,0		150,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**28**			**7400,0**

»

բ. «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» գլխի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «3» և «840,0» թվերը փոխարինել «2» և «570,0» թվերով.

գ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Առևտրի և սպասարկումների վարչություն» գլխի 4-րդ կետում «5» և «850,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «6» և «1020,0» թվերով, և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «13» և «2415,0» թվերը փոխարինել «14» և «2585,0» թվերով.

դ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«

	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն				
1	վարչության պետ	1	270,0		270,0
2	վարչության պետի տեղակալ-գլխավոր նկարիչ	1	250,0		250,0
3	գլխավոր մասնագետ	1	190,0		190,0
4	առաջատար մասնագետ	3	170,0		510,0
5	առաջին կարգի մասնագետ	2	165,0		330,0
6	գործավար	1	120,0		120,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**9**			**1670,0**

»

ե. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գնումների վարչություն» գլխի 4-րդ և 7-րդ կետերում «4», «680,0» թվերը փոխարինել «3», «510,0» թվերով, և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «14» և «2530,0» թվերը փոխարինել «12» և «2190,0» թվերով.

զ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Կոմունալ տնտեսության վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ կետով.

« 1,1	վարչության պետի տեղակալ	1	250,0		250,0 »

ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «14» և «2575,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «15» և «2825,0» թվերով.

է. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում «Մշակույթի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«	**Մշակույթի և տուրիզմի վարչություն**				
1	վարչության պետ	1	270,0		270,0
2	վարչության պետի տեղակալ	1	250,0		250,0
3	գործավար	1	120,0		120,0
	Մշակույթի բաժին				
4	բաժնի պետ	1	225,0		225,0
5	գլխավոր մասնագետ	2	170,0		340,0
6	առաջատար մասնագետ	1	165,0		165,0
7	առաջին կարգի մասնագետ	1	155,0		155,0
	Տուրիզմի բաժին				
8	բաժնի պետ	1	225,0		225,0
9	գլխավոր մասնագետ	1	170,0		170,0
10	առաջատար մասնագետ	1	165,0		165,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**11**			**2085,0** »

ը. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Շինարարության և բարեկարգման վարչություն» գլխի 4-րդ կետում «2» և «340,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «3» և «510,0» թվերով, և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «12» և «2300,0» թվերը փոխարինել «13» և «2470,0» թվերով.

թ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

« -	**Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն**				
1	վարչության պետ	1	270,0		270,0
2	վարչության պետի տեղակալ	1	250,0		250,0
-	**Զարգացման և ներդրումային ենթակառուցվածքային ծրագրերի բաժին**				
3	բաժնի պետ	1	225,0		225,0

4	գլխավոր մասնագետ	1	170,0		170,0
5	առաջատար մասնագետ	2	165,0		330,0
6	առաջին կարգի մասնագետ	1	155,0		155,0
-	**Միջազգային ներդրումային և այլ հաստատությունների նախագծերի համակարգման բաժին**				
7	բաժնի պետ	1	225,0		225,0
8	գլխավոր մասնագետ	1	170,0		170,0
9	առաջատար մասնագետ	1	165,0		165,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10**			**1960**

»

ժ. ուժը կորցրած ճանաչել «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն» և «Տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն» գլուխները.

ժա. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ կետով.

«

1,1	վարչության պետի տեղակալ	1	250,0		250,0

»

ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «6» և «1175,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «7» և «1425,0» թվերով.

ժբ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«

	Ֆինանսական վարչություն				
1	վարչության պետ-գլխավոր ֆինանսիստ	1	270,0		270,0
2	վարչության պետի տեղակալ	2	250,0		500,0
3	վարչության գլխավոր մասնագետ	1	190,0		190,0
4	գործավար	1	120,0		120,0
-	**Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժին**				
5	բաժնի պետ - գլխավոր հաշվապահ	1	225,0		225,0
6	գլխավոր մասնագետ	2	170,0		340,0
7	առաջատար մասնագետ	3	165,0		495,0

-	**Բյուջետային ծրագրավորման բաժին**				
8	բաժնի պետ	1	225,0		225,0
9	գլխավոր մասնագետ	2	170,0		340,0
10	առաջին կարգի մասնագետ	1	155,0		155,0
11	գործավար	1	120,0		120,0
-	**Կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի ծրագրավորման և մոնիտորինգի բաժին**				
12	բաժնի պետ	1	225,0		225,0
13	գլխավոր մասնագետ	4	170,0		680,0
14	գործավար	1	120,0		120,0
-	**Ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական գործառույթների կազմակերպման բաժին**				
15	բաժնի պետ	1	225,0		225,0
16	գլխավոր մասնագետ	1	170,0		170,0
17	առաջատար մասնագետ	1	165,0		165,0
-	**Գործառնական բաժին**				
18	բաժնի պետ	1	225,0		225,0
19	գլխավոր մասնագետ	3	170,0		510,0
20	առաջատար մասնագետ	1	165,0		165,0
21	առաջին կարգի մասնագետ	1	155,0		155,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**31**			**5620,0**

»

ժգ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլխի 2-րդ և 5-րդ կետերում «1», «190,0» և «7», «840,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «2», «380,0» և «8», «960,0» թվերով, և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «51» և «8362,0» թվերը փոխարինել «53» և «8672,0» թվերով.

ժդ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին» գլխով.

«

	Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժին				
1	բաժնի պետ	1	250,0		250,0
2	գլխավոր մասնագետ	2	170,0		340,0
3	առաջատար մասնագետ	2	165,0		330,0
4	առաջին կարգի մասնագետ	1	155,0		155,0

5	գործավար	1	120,0		120,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**7**			**1195,0**

»

ժե. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Ներքին աուդիտի բաժին» գլխով.

«

	Ներքին աուդիտի բաժին				
1	բաժնի պետ	1	250,0		250,0
2	գլխավոր մասնագետ	2	170,0		340,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3**			**590,0**

»

ժզ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «417» և «78509,5» թվերը փոխարինել համապատասխանաբար «422» և «79469.5» թվերով.

ժէ. «Ամբողջը» տողում «1965» և «312979,89» թվերը փոխարինել համապատասխանաբար «1970» և «313939,89» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ 1-ին կետի 2-րդ ենթակետի ա. կետի, որն ուժի մեջ է մտնում 2012 թվականի փետրվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (Այսուհետ՝ նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի աշխատանքների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և ստորև նշված հանգամանքներով՝

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային փոփոխությունները պայմանավորված են.

- Աշխատակազմի մշակույթի վարչությունը վերակազմակերպման միջոցով առաջարկվում է անվանափոխել Մշակույթի և տուրիզմի վարչության, որի նպատակն է առավել արդյունավետ աջակցել մշակութային ժառանգության պահպանությանը, ստեղծել նպաստավոր ու մատչելի պայմաններ մշակութային արժեքներին հաղորդակցվելու համար, խթանել մշակութային գործընթացները, այդ թվում՝ ազգային ու այլ տոների զանգվածային միջոցառումների կազմակերպումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն փաստը, որ Երևան քաղաքը տուրիզմի զարգացման առումով ներկայանալի է իր պատմամշակութային արժեքներով, ուստի տուրիզմի և մշակույթի բաժինների համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է, որ այդ բաժինները ընդգրված լինեն միևնույն վարչության կազմում:

- Հաշվի առնելով, որ Քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և առանձնացված համապատասխան ստորաբաժանումների /ըստ ոլորտների/ միջև անմիջական համագործակցությունն արդեն իսկ արդյունավետ է իրականացվում, առանց այլ ստորաբաժանման լրացուցիչ միջնորդության, ինչպես նաև այն որ վարչական շրջանների ղեկավարների գործունեության գնահատման արդյունքներն Երևանի քաղաքապետին է ներկայացվում աշխատակազմի քարտուղարի կողմից կառուցվածքային ստորաբաժամումների տվյալների հիմքով, ուստի առաջարկվում է լուծարել վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչությունը և կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների միջև փաստաթղթաշրջանառությունը ապահովել քարտուղարության միջոցով, քարտուղարությունում ավելացնելով 1-ական միավոր գլխավոր մասնագետի և գործավարի հաստիք:

- Երևանի ենթակայության առևտրային կազմակերպությունները համակարգվում են աշխատակազմի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից, որոնք ելնելով ոլորտային առանձնահատկություններից և առաջնորդվելով պետական ծրագրերով, մշակում և ներկայացնում են ծրագրեր, որոնց անմիջական վերահսկումը և արդյունքների

գնահատումը իրականացնում է համակարգող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, իսկ դրանց իրականացման համար անհրաժեշտ բյուջետային միջոցների արդյունավետ բաշխումը և նպատակային օգտագործման ապահովումը կատարվում է աշխատակազմի ֆինանսական վարչության կողմից։

Հաշվի առնելով վերոգրյալը, և այն որ տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչությունն իրականացրել է հիմնական վերլուծությունները, իսկ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության մշակման գործընթացի կանոնակարգման, Երևան սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման նպատակով առաջարկների ներկայացման, ներդրումային ծրագրեր կազմելու մեթոդական ուղեցույցերի կազմման և մի շարք այլ գործառույթներ միաժամանակ իրականացվում են ոլորտային կազմակերպությունները համակարգող, ինչպես նաև ֆինանսական ու զարգացման և ներդրումային ծրագրերի վարչությունների կողմից, ուստի աշխատանքներն ավելի արդյունավետ և համակարգված կատարելու համար առաջարկվում է լուծարել տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչությունը՝ ֆինանսական վարչությունում ավելացնելով 2 միավոր գլխավոր մասնագետի հաստիք։

- «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները ապահովելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել Երևանի քաղաքապետի ենթակայությամբ գործող ներքին աուդիտ իրականացնող, առանձին կառուցվածքային ստորաբաժանում՝ աշխատակազմի ֆինանսկան վարչությունից կրճատելով ներքին աուդիտի և վերահսկողության բաժինը։
- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48.1-րդ հոդվածի համաձայն նախատեսվում է 1 միավոր լրացուցիչ ճարտարապետի օգնականի հաստիք, իսկ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժինը ստեղծվում է Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի և աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության լիազորությունները քաղաքաշինական գործունեության տարածական պլանավորման բնագավառում հստակեցնելու և տարանջատելու համայնքային սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման ծրագրերի մշակման, ինչպես նաև գործունեությունն ավելի վերահսկելի դարձնելու նպատակով։
- Աշխատանքային անհրաժեշտությունով պայմանավորված նախագծով նախատեսվում է հաստիքացուցակում ավելացնել Երևանի քաղաքապետի խորհրդականի և օգնականի 1-ական միավոր հաստիքներ, առևտրի և սպասարկումների վարչությունում՝ 1 միավոր առաջատար մասնագետի հաստիք, արտաքին ձևավորման և գովազդի վարչությունում՝ 1-ական միավոր առաջատար, առաջին կարգի մասնագետներ և 1 միավոր գործավարի հաստիք։
- Երևանի ենթակայության կազմակերպությունների գնումների համակարգման մեթոդաբանության և կազմակերպման աջակցության գործընթացը արդեն իսկ կայացել է և վարչությունում ներկայումս առկա է 2 միավոր թափուր գլխավոր մասնագետի հաստիքներ ու հաշվի առնելով, որ կառուցվածքային այլ ստորաբաժանումներում աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով անհրաժեշտություն է առաջացել ավելացնել համայնքային հաստիքային միավորներ, ուտի առաջարկում ենք կրճատել վերոհիշյալ հաստիքային միավորները։
- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով և վարչության գործառույթներն ավելի արդյունավետ իրականացնելու համար նախատեսվում է լրացուցիչ ավելացնել 1-ական միավոր վարչության պետի տեղակալի հաստիք։

- Շինարարության և բարեկարգման վարչությունում ավելացվում է մեկ գլխավոր մասնագետի հաստիք, որը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի ծրագրերով տարեցտարի ավելացվող շինարարության և բարեկարգման աշխատանքների ծավալներով:

2. Առաջարկվող բոլոր փոփոխություններին համաձայնություն տալու դեպքում Երևանի քաղաքապետարանի հաստիքացուցակում ներառված հաստիքային 1965 միավորների թիվը ավելանալու է 5-ով և այն կազմելու է 1970 միավոր՝ 900.0 հազ. դրամ ամսական աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ, որն Երևանի բյուջեում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում՝ հաշվի առնելով աշխատավարձի ֆոնդի ակնկալվող տնտեսումները:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ առաջարկվում է Երևանի ավագանու 06.07.2009թ. N3-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N4-Ա որոշման մեջ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2012 թվականի բյուջեով նախատեսված ծախսերում փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ